600.0238.27.06.12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունիսի 2012 թվականի N238Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N588Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հուլիսի 23-ի N50Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 4-ի №207Ն որոշումն ու «Ապահով տանիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2012 թվականի մայիսի 10-ի N01/05 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 3-ի «Ապահով տանիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Վահագնի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N588Ա որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետում «Վահագնաձոր համայնքի վարչական տարածքում՝ «Նովոսելցովո-Վանաձոր» ջրատարի վրա կառուցված» բառերը փոխարինել «Վանաձոր և Վահագնաձոր համայնքների վարչական տարածքներում՝ Փամբակ գետի Տանձուտ վտակի վրա կառուցված (բնական ջրահոսք)» բառերով.

2) Որոշման 2-րդ կետով հաստատված «Վահագնի» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության N0378 լիցենզիայի պայմաններում «ՀՀ Լոռու մարզի Վահագնաձոր համայնքի վարչական տարածքում՝ «Նովոսելցովո-Վանաձոր» ջրատարի վրա կառուցված «Վահագնի» ՓՀԷԿ» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր և Վահագնաձոր համայնքների վարչական տարածքներում՝ Փամբակ գետի Տանձուտ վտակի վրա կառուցված «Վահագնի» փոքր հիդրոէլեկտրակայան (բնական ջրահոսք)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հուլիսի 27-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
27 հունիսի 2012թ.